«Իմպուլս» ՍՊԸ տնօրեն Դավիթ Խումարյանին,
Հեռ.՝ +374 60 44 12 73
Էլ. փոստ՝ impuls@impuls.am

Տեղեկատվության հարցում «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան» հետազոտության շրջանակում

Հարգելի՛ պարոն Խումարյան,

Ես Նարե Պետրոսյանն եմ, Ձեզ գրում եմ «Հետքի» և «Մեդիայի գլոբալ ռեգիստր» (Global Media Registry) կազմակերպության անունից՝ Հայաստանի մեդիայի ոլորտում թափանցիկության ապահովմանը միտված հետազոտությանն աջակցելու խնդրանքով:

Մենք իրականացնում ենք «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան (Media Ownership Monitoring - MOM Armenia) ծրագիրը՝ Կովկասի տարածաշրջանում մեդիայի սեփականության և բազմակարծության առաջին համապարփակ ուսումնասիրությունը: «Գործարար Ալիք FM106.5»-ն ընդգրկվել է Հայաստանի առաջատար 40 ազդեցիկ լրատվամիջոցների ցանկում՝ հիմնված լսարանի մեծության և տեղեկատվական բովանդակության վրա: Այդ պատճառով էլ դիմում ենք ձեզ:

Մեդիայի սեփականության մոնիտորինգը միջազգային հետազոտական նախաձեռնություն է, որը փաստագրում է մեդիայի սեփականության կառուցվածքը՝ գնահատելու բազմակարծությունն ու մեդիայի կենտրոնացումը: 2015 թվականին սկզբնապես մշակված լինելով «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից՝ ծրագիրն այժմ իրականացնում է Global Media Registry գերմանական ոչ առևտրային հասարակական կազմակերպությունը: MOM-ը իրականացվել է ավելի քան 30 երկրներում, ներառյալ՝ Մոլդովան, Գերմանիան, Իռլանդիան, Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան, Շրի Լանկան և Բրազիլիան: «MOM Հայաստան» հետազոտությունը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության «Քաղաքացիական հասարակության համագործակցություն» ծրագրի կողմից: Նախագիծը կավարտվի 2025 թվականի հոկտեմբերին, և հավաքված տեղեկատվությունը հասանելի կլինի անգլերեն և հայերեն, գլոբալ հարթակում:

Մեդիայի սեփականության թափանցիկությունը կարևոր է բազմակարծության ապահովման և կարծիքների բազմազանության պաշտպանության համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան օրենսդրություն գոյություն չունի կամ գոյություն ունի, բայց պատշաճ կերպով չի գործում, մեդիայի սեփականատերերը պետք է պրոակտիվ կերպով ներկայանան այն լսարանին, որին ծառայում են: Այս

ուսումնասիրությունը կբարձրացնի մեդիայի թափանցիկության աստիճանը լայն հանրության համար և կտեղեկացնի Հայաստանում մեդիայի սեփականության ներկա վիճակի մասին:

«MOM-Հայաստան» հետազոտության շրջանակում կվերլուծվի տպագիր, առցանց, ռադիո և հեռուստատեսության 40 ամենաազդեցիկ մեդիա կազմակերպությունների սեփականության կառուցվածքը: Մեր հետազոտության արդյունքները կներկայացնենք 2025 թվականի հոկտեմբերի վերջին Երևանում կայանալիք կոնֆերանսի ժամանակ:

Կարծում ենք, որ Դուք, որպես «Գործարար ալիք»-ի ներկայացուցիչ, կարող եք զգալիորեն նպաստել մեր նախագծին մասնագիտական փորձագիտությամբ և տեղեկատվությամբ:

- Կարո՞ղ եք տրամադրել ձեր ընկերության կամ սեփականության կառուցվածքի ամփոփ նկարագիրը, եթե այդպիսի փաստաթուղթ գոյություն ունի:
- Խնդրում ենք տրամադրել այն տվյալները, որոնք չենք կարողացել գտնել բաց աղբյուրներում կամ որոնք ունեն հստակեցման կարիք,

մասնավորապես՝

1. Խնդրում եմ տրամադրել Ձեր կենսագրությունը և գործունեության վերաբերյալ մանրամասներ, քանի որ բաց աղբյուրներում, այդ թվում՝ [lratvakan.am](lratvakan.am) կայքում, վերոնշյալ տեղեկատվությունը խիստ սահմանափակ է:
2. Խնդրում եմ տրամադրել «Իմպուլս» ՍՊԸ-ի 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, տեղեկություններ ընդհանուր եկամտի եւ գովազդից ստացված եկամտի մասին:
3. Խնդրում եմ պատմական ակնարկ կատարել լրատվամիջոցի մասին՝ նշելով, թե ինչ անուններով է հեռարձակվել՝ ըստ ժամանակագրության:
4. Խնդրում եմ տրամադրել գլխավոր խմբագրի կենսագրությունը և մանրամասներ տրամադրել նրա գործունեության վերաբերյալ:
5. Խնդրում եմ տրամադրել «Իմպուլս» ՍՊԸ-ի սեփականատեր Ալլա Աբովյանի կենսագրությանը և մանրամասներ նրա գործունեության վերաբերյալ:
6. Եթե «Իմպուլս» ՍՊԸ-ն ներգրավված է այլ բիզնես գործունեության մեջ, խնդրում եմ նշել այդ մասին:
7. Խնդրում եմ նշել՝ քանի աշխատակից ունի լրատվամիջոցը նամակին պատասխանելու պահի դրությամբ:

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու 2025 թվականի հոկտեմբերին կայանալիք կոնֆերանսին՝ քննարկելու արդյունքները տարբեր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ հրատարակիչներ, հեռարձակողներ, լրագրողներ, կարգավորող մարմինների ներկայացուցիչներ և քաղաքականություն մշակողներ: Կոնկրետ օրվա մասին կտեղեկացնենք լրացուցիչ:

Թեև մեր ուսումնասիրության մեջ հիմնականում օգտագործվում են հրապարակայնորեն հասանելի տվյալներ, մենք նախապատվություն ենք տալիս

առաջնային աղբյուրներին՝ ճշգրտության համար: Մենք կարծում ենք, որ այս տեղեկատվության տրամադրումը ոչ միայն հանրային պարտավորություն է, այլև բխում է լրատվամիջոցների շահերից:

Այս նամակագրությունը և Ձեր պատասխանը, կամ պատասխանի բացակայությունը, կփաստագրվի և կցուցակագրվի մեր աշխատանքի թափանցիկության բաժնում: Ինչպես նշվեց, մեդիայի սեփականության ամբողջական մոնիտորինգը կիրապարակվի առցանց և կթարմացվի շարունակաբար:

Մենք սպասում ենք Ձեր պատասխանին մինչև 2025 թվականի օգոստոսի 15-ը և պատրաստ ենք պատասխանել ցանկացած հարցի:

Շնորհակալություն Հայաստանի մեդիայի թափանցիկությանը միտված ջանքերում ձեր ներդրման համար:

Հարգանքով,

Նարե Պետրոսյան

«Մեդիայի սեփականության մոնիտորինգ Հայաստան» ծրագրի թիմ՝ «Հետք» և Global Media Registry

Կապ: hetq.mom@gmail.com

Ուսումնասիրության կայք: www.mediaownershipmonitor.org